

✓ 4-անդ. 1913. էջ 507-508 և էջ 551, կամ
 Հ. Գր. Գալէմքեարեան Կենսագրութիւններ
 Ա. էջ 309-316) ինչպէս նաև Մելքիսեդեկ
 Կաթողիկոսին 1613 ին առ Պօղոս Ե. Պապը
 գրած թուղթէն ուր կ'ըսէ թէ «կարգեցաք
 մեզ զՁափարիս յեկեղակայ մեր ի վերայ եկե-
 ղեցոյն Կ. Պոլսոյ, մերժելոյ՛ անի ի բաց զե-
 պիսկոպոսն զայն գոռոզ», «ահնարկութիւն որ
 անշուշտ ուրիշի մը չի վերաբերիր եթէ ոչ
 միայն Կեսարացիին»:

Փ.

ԿԵՍԱՐԱՑԻ ԶՈՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՊԱՏՐԻԱՐԿ

(1615 — 1618)

1612ին պատրիարքութիւնը կորսըն-
 ցնելէ յետոյ, դարձեալ քաշուեցաւ Կե-
 սարիա իր ծննդավայրը, ուր հաւանօրէն
 դարձեալ իբր առաջնորդ պէտք է ընդուն-
 ուած ըլլայ, թէև որոշ յիշատակութիւն
 մը չիկայ այս մասին:

Սակայն Գրիգոր Կեսարացի, 1612էն
 մինչև 1633 անկարելի էր որ հանդարտ մը-
 նացած ըլլար Կեսարիոյ մէջ, ձեռքերը
 ծալած, տրուած ըլլալով իր արտակարգ
 մաքառող նկարագիրը: